Արձանագրություն N3
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/6-Ա ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 31 օգոստոս 2020թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ալոյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյանը, Ա. Մակարյանը և Է. Մխիթարյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Բանակցությունների վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Մալիշկա-Եղեգնաձոր ջրանցքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/6-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակից ընկերություններից գնի նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցել է «Ջերմուկշին» ՓԲԸ-ի ներկայացուցիչը՝ լիազորված անձ Ռազմիկ Սարգսյանը: Բանակցությունները տեղի են ունեցել 31.08.2020 թվականին ժամը 11:00-ին:

Բանակցությունների ավարտին մասնակից «Ջերմուկշին» ՓԲԸ-ի ներկայացուցչի կողմից առաջարկվել է նոր գին՝ 18 315 026 ՀՀ դրամ՝ հայտով ներկայացված 18 515 026 ՀՀ դրամի փոխարեն:

Հանձնաժողովի որոշումը

Հիմք ընդունելով բանակցությունների արդյունքները հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/6-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Շինմաստեր» ՍՊ «Արարատշին» ՍՊ, «ԷՄՕՇԻՆ» ՍՊ և «Տ-Քնսթրաքշն» ՓԲ ընկերությունների հայտերը մերժել՝ ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/6-Ա ծածկագրով ընթացակարգի 8.2 կետի համաձայն (նախահաշվայինից բարձր գին):

2. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/6-Ա ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Ջերմուկշին» ՓԲԸ-ին,

3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,

5. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակից «Ջերմուկշին» ՓԲԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ---------- Գ. Ալոյան

Անդամներ ---------- Ա. Սիմոնյան

---------- Ա. Մակարյան

---------- Է. Մխիթարյան

---------- Գ. Հունանյան

Քարտուղար ---------- Ա. Սարգսյան